ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/333 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Վենժոու Խինգջաո	Ջ-260706	Վենժոու Խինգջաո Փլեյգրաունդ	Երևանի Էրեբունի վարչական շրջանի կարիքների համար պետք է ձեռքբերվի և վարչական շրջանի ղեկավարի կողմից առաջարկվող տարածքում տեղադրվի թվով 2 հատ մանկական խաղասարք: Մանկական խաղասարքը պետք է մատակարարվի համաձայն կից ներկայացվող լուսանկարին համապատասխան (Նկար № 1), ինչպես նաև տեխնիկական բնութագրում ներկայացված տեսակի, բնութագրի, չափսերի, լինի չօգտագործված: Օգտագործված բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին, ինչպես նաև ապրանքների որակավորման և պարամետրային ցուցանիշներին: Ապրանքի համար պետք է տրամադրվի առնվազն 1 տարվա երաշխիք: Խաղասարքը կազմված է

				հետևյալ մասերից. Անցումային կամուրջ Անցումային կամուրջը պետք է բաղկացած լինի մետաղական շրջանակից, երկու հորիզոնական հարթակների ծածկույթից, թեք հատվածի ծածկույթից և չորս աստիճաններից, որոնք ապահովում են թեք հատվածով անվտանգ և հարմարավետ տեղաշարժը։ Ծածկույթը պետք է պատրաստված լինի բարձր ջրակայուն և մաշվածակայուն հատկություններով օժտված ՖՕՖ լամինացված նրբատախտակից՝ առնվազն 15 մմ հաստությամբ հակասահքային մակերեսով։ Վերին և ստորին հորիզոնական հատվածների ծածկույթների չափերը պետք է լինեն ոչ ավելի, քան 700×300 մմ, իսկ թեք հատվածի ծածկույթի չափերը՝ առնվազն 700×860 մմ։ Ծածկույթը պետք է ամրացվի շրջանակին պտուտակային միացումների միջոցով։ Թեք հատվածի վրա պետք է տեղադրված լինեն առնվազն չորս աստիճաններ, պատրաստված ՖՕՖ լամինացված նրբատախտակից՝ առնվազն 15 մմ հաստությամբ հակասահքային մակերեսով։ Յուրաքանչյուր աստիճանի չափերը պետք է լինեն առնվազն 100×700 մմ։ Անցումային կամրջի շրջանակը պետք է կազմված լինի երկու ուղղանկյուն հորիզոնական հատվածներից և մեկ թեք հատվածից, որոնք միմյանց միացված են եռակցման միջոցով։ Հորիզոնական հատվածների չափերը պետք է լինեն առնվազն 300×700 մմ։ Շրջանակը պետք է պատրաստված լինի առնվազն 50×25×1.5 մմ չափերով պրոֆիլային մետաղական խողովակից։ Պատրաստի շրջանակի ընդհանուր չափերը պետք է լինեն առնվազն 1400×700×350 մմ։

				Ծածկույթը պետք է ամրացվի շրջանակին պտուտակային միացումների միջոցով։ Տանիք Խաղահամալիրի տանիքը պետք է լինի ապամոնտաժվող և ունենա երկթեք կառուցվածք։ Տանիքի թեքությունները պետք է պատրաստված լինեն առնվազն 9 մմ հաստությամբ ջրակայուն նրբատախտակից և ունենան առնվազն 900×710 մմ չափեր։ Թեքությունների ստորին անկյունները պետք է կլորացված լինեն առնվազն R50 մմ շառավղով։ Երկու թեքությունները պետք է միացվեն միմյանց 35×35 մմ չափի մետաղական ամրակներով։ Տանիքի կողային հատվածներում պետք է տեղադրված լինեն դեկորատիվ եզրաշերտեր։ Կողային դեկորատիվ տարրերը պետք է պատրաստված լինեն առնվազն 15 մմ հաստությամբ հղկված, խոնավակայուն ՖՍՖ նրբատախտակից և ներկված լինեն արտաքին միջավայրի ազդեցություններին դիմացկուն բարձր փայլ ունեցող ալկիդային ներկով, որի փայլի աստիճանը կազմում է 85 %։ Տանիքի ընդհանուր չափերը պետք է լինեն առնվազն 900×1020×500 մմ (±10 մմ)։ Տանիքի բոլոր նրբատախտակե տարրերի եզրերը պետք է կլորացված լինեն առնվազն 3 մմ շառավղով և չունենան սուր անկյուններ։ Մուտքի սանդուղք Մուտքի սանդուղքը պետք է բաղկացած լինի երկու բազրիքից, երկու կողային վահանակից, երկու աստիճանից և մեկ պաշտպանիչ վահանակից։ Սանդուղքի ընդհանուր չափերը պետք է կազմեն 640×475×1410 մմ (±20 մմ)։ Բազրիքները պետք է պատրաստված լինեն առնվազն 32×2 մմ չափերով մետաղական խողովակից՝ առնվազն

				1449 մմ երկարությամբ։ Բազրիքներին պտուտակային միացումների միջոցով պետք է ամրացվեն ռոմբաձև կողային վահանակները, որոնք պատրաստված են առնվազն 18 մմ հաստությամբ խոնավակայուն նրբատախտակից։ Վահանակների չափերը պետք է լինեն առնվազն 440×1337 մմ։ Աստիճանները պետք է պատրաստված լինեն ՖՕՖ լամինացված նրբատախտակից՝ բարձր ջրակայուն և մաշվածակայուն հատկություններով, առնվազն 15 մմ հաստությամբ հակասահքային ծածկույթով։ Յուրաքանչյուր աստիճանի չափերը պետք է լինեն ոչ ավելի, քան 150×412 մմ։ Աստիճանները պետք է ամրացվեն մետաղական հենակներին պտուտակային միացումների միջոցով։ Հենակները պետք է պատրաստված լինեն առնվազն 2 մմ հաստությամբ մետաղական թերթից, ունենան առնվազն 412 մմ երկարություն և առնվազն 108 մմ լայնություն և բարձրություն։ Դրանք պետք է ամրացվեն կողային վահանակներին պտուտակային միացումների միջոցով։ Երեխաների անվտանգության ապահովման նպատակով հարթակի և վերջին աստիճանի միջև պետք է տեղադրվի ուղղահայաց պաշտպանիչ վահանակ՝ առնվազն 64×408 մմ չափերով, պատրաստված ՖՕՖ լամինացված նրբատախտակից՝ առնվազն 18 մմ հաստությամբ հակասահքային մակերեսով։ 700 մմ պաշտպանիչ ցանկապատ (տիպ 1) Պաշտպանիչ ցանկապատը նախատեսված է շրջանաձև մագլցման տարրից հարթակ անվտանգ մուտք ապահովելու համար և պետք է իրենից ներկայացնի 580±1 մմ երկարությամբ

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԷ-ԷԱՃԱ ՊԱԲ-26/333 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1				
				մետաղական լայնական խողովակ՝ առնվազն 33.5 մմ տրամագծով և 2.8 մմ պատի հաստությամբ։ Խողովակի երկու ծայրերից ոչ ավելի, քան 13 մմ հեռավորության վրա պետք է նախատեսված լինեն 11 մմ տրամագծով անցքեր՝ մետաղական թերթից պատրաստված առնվազն 2.5 մմ հաստությամբ ամրակների պտուտակային միացման համար։ Ամրակները պետք է կազմված լինեն երկու կիսաողակներից, որոնք պտուտակներով սեղմվում են իրենցից շուրջ և ամրացվում կրա օղակաձև ակոսների վրա։ 700 մմ պաշտպանիչ ցանկապատ (տիպ 2) Ցանկապատը պետք է պատրաստված լինի առնվազն 15 մմ հաստությամբ խոնավակայուն ՖՍՖ նրբատախտակից և ունենա առնվազն 495×740 մմ չափեր։ Կենտրոնական հատվածում պետք է լինեն երկու ուղղահայաց օվալաձև անցքեր՝ առնվազն 80×415 մմ չափերով և ոչ ավելի, քան 40 մմ կլորացման շառավղով։ Անցքերի միջև հեռավորությունը պետք է կազմի 110 մմ։ Ցանկապատը պետք է ամրացվի հարթակի շրջանակին և հենասյուներին պտուտակային միացումների և երկու կիսաողակաձև ամրակների միջոցով։ 700 մմ պաշտպանիչ ցանկապատ (տիպ 3) Այս ցանկապատը նախատեսված է սահարան անվտանգ մուտք ապահովելու համար և պետք է բաղկացած լինի հորիզոնական սահմանափակիչից և երկու կողային պաշտպանիչ վահանակներից։ Շրջանակը պետք է պատրաստված լինի առնվազն 33.5 մմ տրամագծով և 2.8 մմ պատի հաստությամբ մետաղական խողովակից, իսկ լայնական հատվածի երկարությունը պետք է լինի

				առնվազն 580 մմ։ Կողային պաշտպանիչ վահանակները պետք է պատրաստված լինեն առնվազն 15 մմ հաստությամբ խոնավակայուն ՖՍՖ նրբատախտակից և ամրացվեն լայնական խողովակին պտուտակային միացումների միջոցով։ Վահանակների ստորին եզրերը պետք է համապատասխանեն սահարանի թեքությանը և ամրացվեն դրա կողային հատվածներին։ Յուրաքանչյուր վահանակի չափերը պետք է լինեն առնվազն 340×955 մմ։ 1400 մմ պաշտպանիչ ցանկապատ Այս ցանկապատը նախատեսված է անցումային կամրջակի վրա գտնվող երեխաների անվտանգությունն ապահովելու համար։ Այն պետք է պատրաստված լինի առնվազն 15 մմ հաստությամբ խոնավակայուն ՖՍՖ նրբատախտակից և ունենա առնվազն 1118×1340 մմ չափեր։ Մակերեսի վրա պետք է նախատեսված լինեն երեք օվալաձև անցքեր՝ առնվազն 80×415 մմ չափերով և ոչ ավելի, քան 40 մմ կլորացման շառավղով։ Ցանկապատը պետք է ամրացվի կամրջակի շրջանակին և հենասյուներին պտուտակային միացումների և երկու կիսաողակաձև ամրակների միջոցով։ Շրջանաձև մագլցման տարր Շրջանաձև մագլցման տարրը պետք է բաղկացած լինի երկու հենասյունից՝ բազրիքներով, և երեք միացնող սկոբայից։ Յուրաքանչյուր հենասյան ընդհանուր չափերը պետք է լինեն առնվազն 930×1390 մմ՝ առանց հողի մեջ տեղադրվող հատվածի հաշվառման։ Հենասյուները պետք է պատրաստված լինեն առնվազն 33.5 մմ տրամագծով և 2.8 մմ պատի հաստությամբ մետաղական խողովակից՝ առնվազն 1850 մմ

				երկարությամբ: Խողովակը պետք է ծռված լինի երեք տեղում՝ առնվազն R100 մմ շառավղով՝ կազմելով շրջանագծի հատված: Յուրաքանչյուր հենասյանը պետք է եռակցված լինի առնվազն 26.8 մմ տրամագծով և 2.8 մմ պատի հաստությամբ, 1255 մմ երկարությամբ բազրիք, որը պետք է ամրացվի հենասյանը դրա մակարդակից ոչ ավելի, քան 85 մմ բարձրության վրա: Միացնող սկոբաները պետք է պատրաստված լինեն առնվազն 26.8 մմ տրամագծով և 2.8 մմ պատի հաստությամբ, 1165 մմ երկարությամբ մետաղական խողովակից և ունենան «Պ» ձև՝ ոչ ավելի, քան R50 մմ ծռման շառավղով: Ուղղահայաց հատվածների երկարությունը պետք է լինի ոչ ավելի, քան 220 մմ, իսկ դրանց առանցքների միջև հեռավորությունը՝ առնվազն 640 մմ: Սկոբաների ծայրերը պետք է սեղմված լինեն մինչև 20.5 մմ տրամագծի՝ հարևան հենասյուների բազրիքների ծայրերում տեղադրվելու համար և ամրացվեն պտուտակային միացումների միջոցով: Մագլցման տարրի հենասյուները խաղահամալիրի հիմնական հենասյուներին պետք է ամրացվեն կիսաողակաձև մետաղական ամրակների միջոցով, որոնք սեղմվում են պտուտակներով և ֆիքսվում հենասյուների օղակաձև ակոսների վրա: Տեղադրումն իրականացվում է վաճառողի կողմից: Աշխատանքը սկսելուց առաջ պետք է ներկայացվեն բնօրինակ կնիքով անվտանգության և համապատասխանության հավաստագրերը: